*Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:*

# ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, դեկտեմբեր, 2024, № 4 (64), БАРЕГОРЦ

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

*«Բարեգործ»-ի սիրելի՛ ընթերցողներ,*

*«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանը, բոլոր հոգաբարձուները, թերթիս խմբագրակազմը սրտանց շնորհավորում են բոլորիդ Նոր տարվա՝ 2025 թվականի առթիվ:*

*Նախորդ տարիներին բախտը մեզ շատ հարվածեց, մեր ժողովուրդը, մանավանդ արցախահայությունը, կրեց ծանրագույն կորուստներ: Հազարամյակներով իր բնիկ հայրենիքում ապրած, իր նյութական ու հոգևոր մշակույթի գանձերն արարած Արցախի մեր խաղաղ ազգակիցները նախորդ տարիներին ենթարկվեցին ծանրագույն աղետի՝ մեզ բնաջնջելու ծարավի հավակնոտ, ագրեսոր հարևանի բռի ու բռնի ուժով «քաղաքակիրթ» աշխարհի թողտվությամբ հայրենազրկվեց, մատնվեց աստանդականության ու անորոշ ճակատագրի՝ փաստորեն կորցնելով բնօրրան - կենսական տարածքը և ամեն ինչ:*

*Մեծ սպառնալիքներ կան և մեր պետականության ու ազգային անվտանգությանը, բայց մենք, սիրելի՛ հայրենակիցներ, ընկճվող ու հուսահատվող չենք, հարատևելով մաքառելու ենք անցողիկ երևույթների ու բոլոր չարիքների դեմ մինչև մեր ազգային երազանքների իրականացումը:*

*Հայի անընկճելի ոգու ամրությունն ու պատմական արդարության հաղթանակի հավատը հուսադրում են մեզ: Թո՛ղ Նոր տարին՝ 2025-ը, լինի արդարության հաղթանակի, կայուն խաղաղության և առողջության, բազմապատիկ հաջողությունների տարի և ոչ մեկիս հուսախաբ չանի:*

*Շնորհավո՛ր Նոր տարի, սիրելի՛ բարեգործ ընթերցողներ, Ամանորի մեր լավագույն մաղթանքները Ձեզ և Ձեր բոլոր հարազատներին:*

**Հիմադրամի հոգաբարձության խորհուրդ,**
**Խմբագրակազմ**

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

*Ամանորի նախաշեմին բուռն ցանկություն ունեմ դիմելու «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմադրամի սրտացավ բարերարներին՝ մաղթելով նրանց է՛լ ավելի մեծ հաջողություններ և առաջընթաց:*

*Հիմադրամը խորին երախտագիտություն է տածում բոլորիդ հանդեպ և հավաստիացնում, որ Ձեր տրամադրած ամեն մի լումա իր նպատակին է ծառայում, ինչը բոլորիս բաղձանքն է: Բուն նպատակն է արցախցիներին իրենց ազատագրված հողի վրա իրենց տուն ու տեղին, իրենց գործին տեր և Հայաստանը ամուր և հզոր տեսնելը: Համընդհանրական այս ցանկության իրականացման գործում առաջին շարքում քայլող ասպետներից մեկը Գուրգեն Մելիքյանն է, որն իր 88 տարիների բարձրությունից ԵՐԱՇԽԱՎՈՐԻ հուսադրող գունազարդ դրոշն է ծածանում:*

*Ընդունեք լավագույն մաղթանքներս:*

Պրոֆ. ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ
*Հոգաբարձության խորհրդի նախագահ*

## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՈՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉԵՆ ՃԱՆՉՆԱՐ

*«Գուրգէն Մելիքեանի Քաշաթաղի (Արցախ) բազմազաւակ ընտանիքների հիմնադրամ»ի լոս անճելըսեան հանգանակութիւնը*

*16 Նոյեմբեր, 2024*

Հերթական կամ ամենամեայ դրամահաւաքը տեղի ունեցաւ Լոս Անճելըսի Պըրպենք քաղաքի «ՊԵԼԼԵԶԱ» սրահին մէջ՝ ի ներկայութեան մեծ երազի տէր Փրոֆ. Գուրգէն Մելիքեանի եւ իր դիւանագէտ որդւոյն՝ Վահագնի։ Հիմնադիրին հաւատացող ստուար բազմութիւն մը լեցուցած էր սրահը այն հաստատ հաւատքով, որ ինչ որ պիտի տան «ուրիշին»՝ մեր կարօտեալ ու խոցուած արցախահայութեան, «պիտի վերադառնայ անուշցած»։

Մէկ օրէն միւսը աւելի քան 120.000 շրջափակուած արցախահայութիւնը դարձաւ վտարանդի, անտուն, անմխիթար ու հայտնվեց բաց երկինքի տակ։ Ո՞վ օգնութեան պիտի փութար, եթէ ոչ նախ եւ առաջ հայութիւնը՝ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի։ Առաջին օգնութեան հասնողներէն մէկը եղաւ Գուրգէն Մելիքեանն իր հիմնադրամի կազմով ու ընտանիքով։ Հիմնադրամ մը, որ տասնեակ տարիներէ ի վեր արիւն-քրտինք կը թափէր որպէսզի Արցախը շէնացուէր, այգիներով ու պուրակներով ծածկուէր, կարիքաւոր բազմազաւակ մայրեր կարենային տուն-տեղ պահել, գիւղատնտեսական մթերքներ արտադրել եւ հազարամեայ հայրենի հողին հետ շաղախուած արցախցին ապրէր արժանապատիւ կեանք մը, որուն համար չէր խնայած նաեւ իր կեանքը...

Այժմ Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ գիւղերն ու այլ բնակավայրեր լեցուած են խոցուած սիրտով մեր հայրենակիցներով։ Կը թուէր թէ նոյնիսկ Աստուած մոռցած էր զանոնք։ Երէկուան տուն ու այգի, գործ եւ զբաղում ունեցող մեր հայրենակիցներուն համար քիչ է ըսել թէ կը գտնուին անմխիթար կացութեան մէջ։

Պատշաճ ընդունելութիւնը կը յատկանշուէր ներկաներու բազմութեամբ մը, որ եկած չէր ուրախզուարթ հաճելի ժամանց մը անցընելու, այլ լսելու հայր եւ որդի պատգամաբերներու խօսքը եւ կատարելու իր սրտաբուխ նուիրատուութիւնը։ Ներկաներուս տրամադրութեան վրայ զուարթութիւն մը բերին ՀՀ Ճազային Համոյթի արհեստավարժ սաքսոֆոնահար Առնօ Ստեփանեանը, վաստակաւոր երաժիշտներ Արմէն Հուսնունցը, դաշնակահար Խաչատուր Սահակեանը, ինչպէս նաեւ Դաւիթ Սամուէլեանը ու իրեն նուագակցող Արամ Լեփեճեանը։ Ամէն ինչ կը գտնուէր իր պատշաճութեան մակարդակի վրայ։ Ինչպէս միշտ Դաւիթ Սամուէլեան ներկաները ոգեւորեց իր հայրենասիրական եւ ժողովրդական կատարումներով՝ շնորհիւ Արամի ընկերակցութեան։

Սրահի մէկ անկիւնը դրուած էին վաճառքի համար բերուած իւղաներկ կտաւներ, ժողովրդական ձեռարուեստի ցուցադրանքներ եւ գորգեր, որոնց հասոյթը պիտի յատկացուէր մեր կարիքաւոր հայրենակիցներուն։

Ծափերու ներքոյ բեմ բարձրացաւ «օրուան

*Դրամահավաքի երեկոյթին*

«հերոսը»՝ Փրոֆ. Գուրգէն Մելիքեան, ով խորհրդային տարիներուն տակաւին աշխուժօրէն հանդէս եկած է Երեւանի Պետական Համալսարանի ուսանողութիւնը հայրենասիրական ոգիով դաստիարակելու առաքելութեամբ, որպէսզի կերտուէր վաղուան հայը։ Ան նոյն ոգիով իր խոսքը սեւեռեց նաեւ Արցախի վրայ՝ անոր ամէնէն ծանր տարիներուն իր կեանքը վտանգի ենթարկելով ուղղաթիռով թռաւ Ստեփանակերտ, հասցուց դեղօրայք

զինամթերք եւ իր հետ Երեւան հասցուց վիրաւոր ազատամարտիկներ։ Պատերազմի թէժ օրերուն ան ազատամարտիկներու հետ քալեց ռազմի ճամփաներով եւ եղաւ Մոնթէ Մելքոնեանի «եղբայրը», հովանաւորը, խորհրդատուն, զինակիցը...

Շնորհակալ ենք անխտիր բոլոր նուիրա-

*Վաճառքի պարագաները*

տուներին,- ըսաւ ան,- տարիներով մեր արեւելեան թիկունքը պաշտպանած արցախցին աւելի քան երբեք այսո՛ր պէտք ունի մեր աջակցութեան, որպէսզի բռնի տեղահանուած ու ամէն ինչ կորսնցուցած մեր հայրենակիցները փոշի չդառնան, չհեռանան հայրենի սահմաններից եւ ապրեն արժանապատիւ կեանք մեր հայրենիքում...

Արդարեւ, ցաւօք սրտի, մեր հայրենի իշխանութիւնները մատներու արանքով կը նային հէ՛ք զրկեալներուն եւ իրենց տուած իսկապէս չնչին նպաստներով կը հաւակնին երեւալ որպէս սրտցաւ իշխանութիւն։

Ինչպէ՞ս կարելի է բացատրել այն տխուր փաստը, որ տեղահանուածներէն 16 հազարը արդէն իսկ մեկնած է Ռուսաստան կամ այլուր...

Ելոյթ ունեցաւ նաեւ Գ. Մելիքեանի դիւանագէտ որդին՝ Վահագն Մելիքեանը, ով զուսպ խօսքերով ներկայացուց իր հօր ամբողջական եւ անձնազոհ նուիրումը։ «Ան կարծես թէ մոռացել էր, որ տուն-տեղ եւ ընտանիք ունի», ըսաւ արժանաւոր որդին։

Քաջալերական խօսքերով քանիցս հանդէս եկաւ նաեւ առաջին մէկ օրէն հիմնադրամին աշխատանքներուն աջակից եղած Դոկտ. Մինաս Գոճայեան։ Ան մօտիկէն ծանօթ ըլլալով հիմնադրին եւ անոր օգնական վարչական անդամներուն նսակարկ նեցուկին, անձնական վկայութիւններով ներկաներուն մատուցեց բարեգործութեան աշխատանքներուն գործընթացը։ Իր ելոյթով Բժ. Վաղարշակ Փիլոսեան խրախուսեց ներկաները, որպէսզի մասնակցին բարեգործութեան, որ սահման չունի։

- Շնորհակալ եմ բոլոր ներկաներից, նուիրատուներից, սակայն յատուկ երախտագիտութիւնս եմ ուզում յայտնել աւագ ընկերոջս դստեր Տիկին Տիանա Պարսամին՝ առատաձեռն նուիրատուութեան համար եւ որն էլ յետոյ կրկնապատկեց,- յուզմունքով աւարտեց իր խօսքը Փրոֆ. Գ. Մելիքեան։

Օրուան բարձրակէտը կարելի է նկատել Ալբերտ Վարդանեանի «Արարատ» ազգագրական համոյթի պարման-պարմանուհիներու ներկայացուցած ոգեշունչ պարերը, որոնց խրոխտ կատարողութեամբ մթնոլորտը աւելի հայացաւ։

Այնքան ատեն որ մենք չենք հաշտուած Արցախի (ժամանակաւոր) անկումին հետ եւ մեր հայատրոփ սիրտին ու հոգիին մէջ կը գուրգուրանք տիրանալու, վերահաստատուելու եւ վերակերտելու գաղափարին վրայ, ԱՐՑԱԽԸ ՄԵ՛ՐՆ Է, ԻՆՉՊԷՍ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ։

*Կամավորների հետ*

Դոկտոր ՄԻՆԱՍ ԳՕՃԱՅԵԱՆ

Լոս Անճելըս, 26 Նոյեմբեր 2024

*Գուրգեն Մելիքյանը երեկույթի ժամանակ «Արարատ» պարի համույթին նվիրեց "Արարատ" պատկերազարդ ալբոմները*

## Աջակցություն սննդի տրամադրմամբ

*Զոհրաբ Ըռբոյան*
*Դեկտեմբերի 18, 2024*

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» (ԳՄՔԲԸՀ) շարունակում է նյութական աջակցություն տրամադրել բռնի տեղահանված արցախցիներին:

2024 թ. դեկտեմբերի 5-6-ին հիմնադրամի գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձության խորհրդի նախագահ Արծրուն Ավագյանը, պրոֆ. Մարատ Գրիգորյանը, Կանադայի «Գլոբալ Մեդիկ» կազմակերպության ներկայացուցիչներ Ռոբինի, Ջեյնի և Լինի հետ այցելեցին չորս ընտանիքի՝ Երևանում և Արագածոտնի մարզի Աղձք գյուղում: Սա «Գլոբալ Մեդիկ» կազմակերպության 6-րդ այցն է 2024թ.-ին:

Բազմազավակ ընտանիքներին այս անգամ սննդի մի մասը տրամադրվեց հիմնադրամի, մի մասը «Գլոբալ Մեդիկ»-ի կողմից:

*Արևիկ Գրիգորյանի ընտանիքում*

Արցախցի ամեն հայ ընտանիք եղերաբախտ հայության կյանքի մի մանրակերտ է: Էռնեստ Խոսրովյանի և Արևիկ Գրիգորյանի բազմազավակ ընտանիքն էլ է այդպիսին: Շուշեցի այդ ընտանիքը 2014թ. բնակություն հաստատեց Քաշաթաղի շրջանի Հերիկ գյուղում:

Այստեղ ծնված որդիներից մեկին կոչեցին Ռոբերտ՝ ի պատիվ 2016թ. Ապրիլյան քառօրյայում հերոսաբար մարտիրոսված Արցախի հերոս Ռոբերտ

*Աննա Կարապետյանի ընտանիքում*

Աբաջյանի, ում անունով էր կոչվում Հերիկի նորակառույց դպրոցը:

2020 թ. ընտանիքն սկզբում տեղափոխվեց Երևան, սակայն 9 ամիս անց վերադարձավ Արցախ և բնակություն հաստատեց Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում, որտեղ ծնվեց 9-րդ զավակը:

Էռնեստի և Արևիկի ընտանիքը մշտապես եղել է Հիմնադրամի ուշադրության կենտրոնում:

2023 թ. սեպտեմբերին բոլոր հայերն ստիպված էին լքել հայրենի Արցախը, այս ընտանիքն էլ՝ Ճարտարը: Ճարտարը: Արևիկենց ընտանիքը հաստատվեց Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղում՝ ժամանակավոր բնակարանում: Հետագայում տեղափոխվեց նույն մարզի Կաթնաղբյուր գյուղ, այնուհետև՝ Երևանի Հաղթանակ թաղամաս: Վերջերս ստիպված դարձյալ տեղափոխվել և ժամանակավոր բնակվում է Նուբարաշենում:

Բարերարները հերթական անգամ այցելեցին այս ընտանիքին և հատկացրեցին սնունդ: Ծանոթացան բնակության պայմաններին:

Արագածոտնի մարզի Աղձք գյուղում է բնակվում Լիանա Սաֆարյանի ընտանիքը՝ տեղափոխված Շուշիից:

Երևանում՝ Զորավար Անդրանիկ փողոցում է բնակվում Աննա Կարապետյանի բազմանդամ ընտանիքը՝ 5 անչափահաս երեխաներով: Հերթական այցելությունն էր այս ընտանիքին:

Դեկտեմբերի 6-ին Հիմնադրամի գործադիր տնօրենը և հոգաբարձության խորհրդի անդամներն այցելեցին Էրեբունի, որտեղ էլ տեղավորվել է Մարուսյա և Գրիգոր Սահակյանների ընտանիքը. ունեն 5 երեխա: Որքան էլ ծանր է աստանդական հայ բազմազավակ ընտանիքի այս վիճակը, և դառը՝ ծնողների ու մանկանց աչքերում անորոշության թախիծ տեսնելը, որպես մարդ մխիթարվում ես՝ կողքիդ տեսնելով «Գլոբալ Մեդիկ» մարդասիրական կազմակերպության հարազատացող ներկայացուցիչներին և լսելով Գ. Մելիքյանի հուսադրող խոսքը.

- Արցախցի բազմազավակ ընտանիքներին նյութական աջակցությունն շարունակվելու է:

*Սահակյան Մարուսյայի ընտանիքում*

## A Force to be reckoned with…A legend returns to LA

Gurgen Melikyan is a MAN of MIRACLES… indeed, he is a Miracle himself. In 2005 he was diagnosed with deadly pancreatic cancer, but was saved due to intervention by many warm relationships forged among rescuers in the medical communities at home and abroad in the worldwide Armenian Diaspora who answered the distress calls from the Homeland after the devastating 1988 Gyumri/Spitak earthquake, then on to the break up of the Soviet Union in the 90's which resulted in two devastating wars with the neighboring Azerbaijan. In the midst of the turbulence of those times he managed to wedge in a 55 year career of teaching in the Oriental Studies Department of Yerevan State University. He raised a family and in his "spare time" he took student groups to Artsakh to plant thousands of trees to reforest Artsakh…and before THAT he ran medical support and personnel and even accompanied helicopterflights of FUEL to war zones! After the active phase of the war, Gurgen ran countless convos of supplies and supporters to Artsakh to share in and witness his unceasing DIRECT SUPPORT to families and especially his personal medical deliveries to the wounded which never stopped until the most recent allout war waged by the Azeris which drove out the entire population of Armenians in Artsakh. Then, in 2005, when he found his own life threathened by pancreatic cancer, hediscovered the meaning of the saying " Cast your bread upon the waters and it will



*Gurgen Melikyan and Mary Kanian*

come back to you". The medical community he had supported in earthquake times and in war surrounded him with loving gratitude and CARE. He required a very complex surgery done in only a couple places in the world. It required he be placed in a "surgical coma" for several days and then a lengthy recovery of nearly a year.

Now, once again, we can say "He's baaack…!!! To the amazement of all who know him back home in Armenia and in the Diaspora, the "retired" professor Emeritus Gurgen Melikyan of Yerevan State University has returned to Los Angeles on another quest for emergency aid urgently needed to SUPPORT the DISPLACED POPULATION of Artsakh.

I first met Professor Melikyan over the phone on a call shared by a mutual friend who had described me as someone the professor should meet. Gurgen invited me to come to Armenia to see it in person.

"From your lips to God's ears"! I exclaimed… and in 4 month's time, it came to pass that I DID go with my Armenian teacher friends for our first time!. That was in 1997 and we continued to go nearly every year ever since then! I am an "ABC"-Armenian by Choice". But my inspiration for wanted to see Armeniafor myself was my wonderful mother-in-law, Anoush. Though she was born in Iran, I had to find out if she was unique among Armenian moms or if they were all like her. I am so proud to tell people that " I found her everywhere" in Armenia, America and everywhere in the world where you encounter the Armenian Diaspora population. It must be in the DNA.

Since 1997, the year of our first visit to Armenia, we have literally followed this man through forest trails, up and down hills and upstairs and downstairs of hospitals where he regularly inspected progress on reconstruction of facilities, toured orphanages and been touched to the core at the LOVING CARE infants and children received… (especially at the IMMACULATE CONDITIONS we encountered even when we dropped in unexpectedly!). We observed him personally signing out funding for the Multichildren families and distributing cooking essentials in bags. I've never seen anyone who worked harder for his people than Gurgen Melikyan. The expressions of JOY and LOVE on the faces of young and old alike are so heartwarming and invigorating every time!! It recharges the SOUL and the HUMANITY OF IT ALL is so Inspiring every time. I never fail to remind Gurgen that he makes angels of us all as he converts our donations into satisfaction of creating SMILES and the WARMTH of knowing that someone far away Cares about these remarkable and resilient people.

MARY KANIAN,
Board member and supporter of our Foundation

## Հիմնադրամիս մեծ հովանավոր Դայան Բարսամի խոսքը

Հավատարիմ բարերար Դայան Բարսամի հետ

*It is with love and honor that I support the Gourken Melikian multifamily foundation. I know the work the foundation does has a huge impact on the Artsakh refugees as well as other families in Armenia. The families that are affected are in critical times. If we can we must help. Because of my father, Vartkes Barsam,I was taught that we must help those in need if we can. I thank the foundation for giving me a connection to helping the Artsakh refugees. I've never been but my father fought and loved Artsakh. With Gods blessings, I hope more families get help with our donations. I thank and am so proud of my daughter Catherine and her fiancé Harrison for purchasing everything for 250 Christmas gift bags for refugee children.*

## Մեր հիմնադրամի պատանի բարերար ՎԱՀԱԳՆ ՍԵԹՅԱՆԻ հիշատակին նվիրված ամենամյա ծառատունկ Բեվեռլի Հիլզում

Ծառատունկին մասնակցում էր Գուրգեն Մելիքյանը:
Ստորև ներկայացնում ենք Վահագնի հայրիկի՝ Կարեն Սեթյանի ուղերձը անգլերենով:

*Thank you for being with us this morning, it's very heartwarming! Another year, another December Sunday, to plant another tree. When we plant a tree, I know Vahag is here, sitting somewhere close and watching us. Trees are always grounded, but they never stop from reaching towards heavens. They are beautiful, but more than that, they have a right to life. And just like water, the sun, and the stars, trees are essential. Life on earth will be inconceivable without them. It's very special to have many of Vahagn's friends here as well. Some of them are here with their own children. It's amazing to see how Vahagn reaches the next generation. Thank you all again, and many blessings to you, your families, and your loved ones on this holiday season.*



*Ծառատունկի ժամանակ*

*Գուրգեն Մելիքյանը Սեթյան ընտանիքի հետ*

## Ուղերձներ Գուրգեն Մելիքյանին

**Անի Բասենցյանից**
**Արևելագետ, նախկին ուսանողուհի**

Իմ Քաշաթաղի Ասպետ, շնորհավորում եմ Ձեր տարեդարձը: Իմ պարոն Մելիքյան, Աստված անկարագրելի շռայլ է գտնվել իմ հանդեպ՝ Ձեր տանը մայրս է եղել, համալսարանում ինձ կյանքի ուղով Դուք եք տարել . միասին տնկել ենք իմ առաջին ծառը (Արցախից բերված նոնենին) , հենց Դուք եք իմ մեջ սերմանել, շատացրել, վառել իմ Հայ լինելու ... իմ Հայրենիքը սիրելու .. այն կողը , որ երդվել եմ Ձեզ իմ սերունդներին փոխանցել, որ Ձեր խոսքը ապրի Հավերժ:
Դուք ինձ միշտ սիրել եք յուրովի, նուրբ, Ձեր աղջկա պես, ճիշտ այն նրբությամբ և խնամքով, ինչպես Ձեր աշխատասենյակի ծաղիկները, որոնց ջրելը միայն ինձ էիք վստահում:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում իմ անցկացրած տարիները եղել են իմ կյանքի կարևո-

բագույն փուլը , որ հպարտությամբ եմ հիշում: Հենց դուք եք ինձ ներկայացրել Սրբազանին իբրև ձեր ուսանողուհի՝ որը լինելու պատիվը միշտ բարձր և պատասխանատվությամբ կկատարեմ, քանի որ այն այդ պահից կրկնապատիկ է :

Շնորհակալ եմ , որ կաք իմ Կյանքում դեռ շատ բան ունեք ինձ սովորեցնելու:

Առողջ լինեք և թող Ձեր ծնունդը մեր պայքարի Հաղթանակի ավետիսը լինի: Սա իմ Անսահման սիրո 0.001%-ն է ընդամենը, որ կարողացել եմ բառերով արտահայտել:

---

**Արմինե Մելիք-Իսրայելյանից**
**արվեստագետ**

Շնորհավոր տարեդարձդ, Գուրգեն Մելիքյան...

Իմ հպարտություն, իմ արյուն, իմ հերոս...

Առողջ, ավյունով ու տոկունությամբ լեցուն կյանք եմ մաղթում Քեզ այս փոթորկաշատ օրերում, երբ գիտեմ՝ ինչպես ես Արցախի ու արցախցու համար պայքարում, մի ողջ կյանք և ավելին...

Հպարտ եմ, շնորհակալ, որ կաս ու ՏԵՍԱԿ ես խորհրդանշում Քո կյանքով ու սուրբ գործով, Քո մեծ արդ լինելությամբ...

Աստված ուժ տա նոր պայքարի...

Բարձրունքից եկողը գիտի նրա զորությունը...

Շնորհավոր տարեդարձդ, Մելիքյան տոհմի իմ ամենավառ ասպետ...

Ես հպարտ եմ, որ ժառանգորդն եմ այդ հզոր ու մեծ գենի, որը գիտի անմնացորդ նվիրվել, կյանք տալով ու կյանք փրկելով ապրել, հերոսությամբ ապրել կյանքը ամեն վայրկյանի մեջ...

Համբուրում եմ, զորեղ, մեծ Հորեղբայր, Աստված երկար և առողջ պահի քեզ, նոր հաղթանակի արշալույսները պիտի տեսնես...

ՀԱՅ՝ Գուրգեն Մելիքյան, գրկում եմ, բարի ու հզոր ՄԱՐԴ, Մտավորական, Ձինվոր, մեծ ուսուցիչ, իմ արյուն ու մեծ Հավատ.

---

**Ռուզաննա և Սյուզաննա Աղաբաբյաններից**
**Տավուշեցի, Կողբեցի քույրեր**

Օրինակ իրակա՞ն Հայի, հայրենատե՛ր Հայի, հայրենիքի ցավով ու հայրենիքի ցավն իր սրտում կրող ու այդ ցավից վեր հառնող հայի, այլ ոչ երբե՛ք «ծնկին տվող ու հնազանդվող ու, որպես ինքնարդարացումի խոսք ասելով, հա՛, դե ես ի՞նչ կարող եմ փոխել» կամ, թե, չէ՛ հիասթափվել եմ, հուսալքվել»... ո՛չ ու էլի ու էլի ո՛չ, այդ ինձ համար հոմանիշն է դավաճանի ու դավաճանության, հայրենադավության, այլ ուրիշ բնորոշում չունի ու չկա...: Հիասթափվել ես, ինչի՞ց ինքդ քեզնից, քո տուն ու շենից, գոյութենական քո հենքից ու արմատից, իսկ, միգուցե, հենց Դո՛ւ պիտի լինես այն մեկը, ով հենց այդ նույն հուսալքումից պիտի հանի այն ուրիշ մեկին: Իսկ, միգուցե, հենց ա՞յդ էր պատճառներից այն գլխավորը, որ այսօր Արցախը հայաբնակեցված չէ այլևս... մտածի՛ր...

ՀԳ. Պարոն Մելիքյա՛ն ջան, իմ անչափ սիրելի ուսուցիչ, ավագ ընկեր, բարեկամ, սրտակից, պարտավորություն, անսահման պատասխանատվություն ու մեծ, անասելի երջանկություն է ապրել Ձեզ հետ կյանքի միևնույն ժամանակահատվածում, Ձեզ հետ անցնել գոյաբանական այս Սրբազան պայքարի ողջ ճանապարհը: Ես ավելի քան վստահ ու համոզված եմ, որ այն հասնելու է իր վերջնահանգրվանին, որն է ճշմարտության հարատև հաղթանակը, հանուն հավերժացած այն կյանքերի, հանուն նոր ծնվող կյանքերի ու գալիքի:

Այո՛, հանուն այդ բոլորի մենք դեռ պիտի պարենք մեր այս պարը, պարը կյանքի ու պայքարի: Ու վստահաբա՛ր մենք այս պարը միասնաբար ենք պարելու Արցախ - Հայաստան միասնական, անխախտ ու այլևս արդեն անբաժանելի միասնության գիտակցումով ու կենարար ապրումի մեջ, մեր այս պարը մաքառումի, մեր այս պարը հարատևման լեռների մեջ՝ լեռների հետ դա՛ր ու դարե՛ր...

## ՍՏԱՑԱԿԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

16.12.2024

Սույնով հավաստում և մեր շնորհակալությունն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» ԵՊՀ գրադարանին «Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ» 2-9 համարներ, Արփեն Մովսեսյանի «Հայից հայ», Թորգոմ Վեհապետյանի «Նոր սերունդը՝ քավության նոխազ», «Թուրքիայի պատմություն», Անահիտ Բարսեղյանի «Արցախի վանքերը», Գուրգեն Մելիքյանի «Սաադին հայերեն», Կարեն Գևորգյանի «Պետություն-ընտանիք պետություն-ամրոց», Բակուրի «Շուշեցու հիշատակարանը», Կարեն Չախալյանի «Մոնթեն նայում է Արարատին», Ասպրամ Ծառուկյանի «Բարև՛, ինչպե՞ս եք, լա՞վ եք», Կոնֆուցիոսի «Զրույցներ», «Շիրվան և հարակից տարածքներ», Бакур. «Маргушаван Марага», Бакур. «34 письма из России», Григорян Н., «Мой путь к богу или выкраденная избранность» գրքերի օրինակներ նվիրելու համար:

Գրականությունը կհամալրի ԵՊՀ գրադարանային ֆոնդը և օգտվողները հնարավորություն կունենան ուսումնասիրելու այն գրադարանի ընթերցասրահներում:

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի տնօրեն՝
(ստորագրություն, կնիք)
Ե. ՄԻՐԶՈՅԱՆ

## «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԴՐԱՄԱՀԱՎԱՔ. Լոս Անջելես, 2024

| | LAST NAME | FIRST NAME | CHECK # | | ONLINE | CASH | COMMENTS |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Check # | Amount | | | |
| 1 | Anonymous | NM | 2164 | $500.00 | | | |
| 2 | Anonymous | LM | | | | $700.00 | |
| 3 | Abrahamian | Jacqueline | | | | $100.00 | |
| 4 | Abrahamian, Kyupelyan | Ohan, Haykuhi | | | | $300.00 | |
| 5 | Aghamalian | Rita | | | | $200.00 | |
| 6 | Akgulian | Nick A | 2769 | $2,000.00 | | | |
| 7 | Altounian | Mary Mayda, Jack Hagop | 583 | $100.00 | | | |
| 8 | American Heating Technology | | 3749 | $1,000.00 | | | |
| 9 | Amirian | Robert | 155 | $1,000.00 | | | |
| 10 | Aram Tchobanian Trust UAD | | 1154 | $1,000.00 | | | |
| 11 | Armenian International Foundation | | 1055 | $1,230.00 | | | |
| 12 | Atelier D Paris | | 11387 | $100.00 | | | |
| 13 | Avagyan | Hayk | | | | $100.00 | |
| 14 | Avanessian | Noramayr | | | | $500.00 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Badalyan | Sarkis and family | | | | $200.00 | |
| 16 | Badalyan | Harutyun | | | | $300.00 | |
| 17 | Baghdanian | Ariknaz | | | | $500.00 | |
| 18 | Balian | Raffi | 1151 | $1,000.00 | | | |
| 19 | Bakhshian | Alice | | | | $120.00 | |
| 20 | Basmadjian | Vartouhi | | | | $140.00 | |
| 21 | Cohen | Mabelle | 1158 | $500.00 | | | |
| 22 | Diane Jean Barsam Family Trust | | | | $20,000.00 | | |
| 23 | Galstanyan | Vahan | | | | $100.00 | |
| 24 | Float Pasadena | Edgar Pashaian | 1189 | $300.00 | | | |
| 25 | Fundukian | Sonia | 1002 | $1,000.00 | | | |
| 26 | Fundukian | Sonia | 1010 | $1,000.00 | | | |
| 27 | Glendale West Pharmacy INC | | 1267 | $1,000.00 | | | |
| 28 | Gharibian | Vrej, Karine | 8889 | $9,000.00 | | | |
| 29 | Gourjian | Roubin | 1213 | $100.00 | | | |
| 30 | Grigorian | Gevorg | | | | $100.00 | |
| 31 | Guledjian | Hagob and Anahit | 8846 | $400.00 | | | |
| 32 | Haitaian | Leo Shant | | | | $1,000.00 | |
| 33 | Hayrapetian Dental Corporation | Alajajian T. | 5975 | $2,000.00 | | | |
| 34 | Javakova | Zara | | | $5,000.00 | | |
| 35 | K. George Najarian revocable trust | | 1047 | $5,000.00 | | | |
| 36 | Kalognomos | Medea & Alexander | 302 | $200.00 | | | |
| 37 | Kanian | Mary | 175 | $700.00 | | | |
| 38 | Kassabian | Ara | 30565 | $1,000.00 | | $100.00 | |
| 39 | Kojayan | Minas, Nazelie | 810 | $200.00 | | | |
| 40 | Koundakjian | Armineh | 3231 | $250.00 | | | |
| 41 | Kupelian | V, A | 2998 | $500.00 | | | |
| 42 | Manukyan | Tatev | | | | $100.00 | |
| 43 | Martin | Zarreh | 1004 | $1,000.00 | | | |
| 44 | Martin | Zarreh | | | | $500.00 | Via Gurgen Melikyan |
| 45 | Medical Outreach for Armenians | | 1311 | $ 400.00 | | | |
| 46 | Minasvand | Anik | 4729 | $100.00 | | | |
| 47 | Mulroy | Anna A | 2043 | $5,000.00 | | | |
| 48 | Muradyan | Grisha | | | | $250.00 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 49 | Nalbandian | I | 5663 | $500.00 | | | |
| 50 | Nazarian | Romik | | | | $250.00 | |
| 51 | Nersisian | Eduard & Karine | | | | $3,000.00 | |
| 52 | Nersisian | Eduard & Karine | | | | $500.00 | Via Gurgen Melikyan |
| 53 | Nersesyan | Varduhi | 5795 | $300.00 | | | |
| 54 | Odatchian | Arsine | | | $1,182.35 | | |
| 55 | Petrsossians | Patrick | | | | 1500 € | |
| 56 | Pilossyan | Vagharshak | 4475 | $1,000.00 | | | |
| 57 | Samvelian | David | 3067 | $1,000.00 | | | |
| 58 | Samvelian | David | 3014 | $500.00 | | | |
| 59 | Sargsyan | Eduard | | | | $100.00 | |
| 60 | Sarkissian | Edmond Salim | 429 | $300.00 | | | |
| 61 | Setian | Karen | 546 | $500.00 | | | |
| 62 | Stepan Alajajian Literary Foundation Inc | | 192 | $500.00 | | | |
| 63 | Stepan Alajajian Literary Foundation Inc | | 191 | $950.00 | | | |
| 64 | Tchobanian Khatchadourian | Aram and Aida | 4249 | $1,000.00 | | | |
| 65 | Torosian | Ailin | 1984 | $300.00 | | | |
| 66 | Valley Hills Home Health Care Inc | | 1120 | $1,000.00 | | | |
| 67 | Yeghiyants | George | | | | $400.00 | Via Gurgen Melikyan |
| 68 | Yeghiyants | Arto | | $150 | | | |
| 69 | Yerijanian | Anush | | | | $200.00 | |
| 70 | | Aramazd & Gabrielle | | | | $ 70.00 | |
| 71 | | Vahagn & Meri | | | | $200.00 | |
| 72 | | Alice | | | | $120.00 | |
| 73 | | Mary | | | | $200.00 | |
| 74 | Bank Credit | | | | $155.91 | | |
| 75 | CYBERGRANTS-CAFA DES AM GEN | | | | $10,000.00 | | |
| 76 | GOFUNDME | | | | $1,456.2 | | |
| 77 | CASH DEPOSIT | | | | | $250.00 | |
| 78 | CASH FROM SALE | | | | | $6,224.00 | |
| | | | | **$45,580.00** | **$37,794.11** | **$16,824.00 & €1500** | |

## 2024թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

***Թերթի նախորդ համարներում տես 2024 թ. հունվարին ստացված օգնությունները***

| Հ/հ | Ամսաթիվ | Անուն, ազգանուն | Վճարման նպատակ | Գումար | Համարժեք | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | 02/11/2024 | Հենրիկ Ճահնազարյան | Օգնություն Արցախից բռնի տեղահանված երեխաներին | 38400 | 100 USD | |
| 15 | 02/11/2024 | Միրզոյան Քնարիկ | Օգնություն | 92000 | | |
| 16 | 02/11/2024 | Հասմիկ և Ռաֆիկ Բորոյաններ | Օգնություն Արցախից բռնի տեղահանված երեխաներին | 200000 | | |
| 17 | 04/11/2024 | Վանեցյան Կարեն Ռոբերտի | Օգնություն | 3871700 | 10000 USD | |
| 18 | 08/11/2024 | Հովհաննիսյան Վոլոդյա | Օգնություն | 120000 | | |
| 19 | 03/12/2024 | Վանեցյան Կարեն Ռոբերտի | Օգնություն | 3978800 | 10000 USD | |
| 20 | 06/12/2024 | Jane Westfall | Food project from Global Medic, Jane, Robin, Linn | 85850 | | |
| 21 | 10/12/2024 | Հովհաննիսյան Վոլոդյա | Օգնություն | 60000 | | |
| 22 | 16/12/2024 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն Anonymous Ash. & T. B. | 500000 | | |
| 23 | 26/12/2024 | Բերնարդ Նազարյան | Prof Gurgen Melikyan's 88th birthday special celebration-allocation for Kashatagh Multi Children Families Charity – Christmas party or gifts, etc. | 650000 | | |
| 24 | 26/12/2024 | Tony Kahve | Օգնություն | 400000 | | |
| 25 | 26/12/2024 | Ճմավոն Ճմավոնյան | Օգնություն | 41000 | | 100 Euro |
| | | **Ընդամենը՝** | | **9,596,750** | **20,100 USD** | **100 Euro** |

## *Արցախյան պատերազմներին մասնակցած հաշմանդամ զինվորների և կամավորների՝ հիմնադրամին հասցեագրված շնորհակալական նամակներից*

### Նամակ առաջին

Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին՝ մեզ օժանդակելու համար:

Ես Սերգեյ Խաչատրյանն եմ, ծնվել և մեծացել եմ Երևանում: Սովորել եմ Գարեգին Նժդեհի անվան թիվ 161 դպրոցում, ուսումս շարունակել Երևանի մշակույթի պետական քոլեջի օպերատորական ֆակուլտետում: Ուսումս դեռ չավարտած՝ ծառայության եմ անցել Մատաղիսում՝ Արցախի 6-րդ պաշտպանական շրջանում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողություններին մասնակցել եմ ամբողջությամբ, այնուհետև շարունակել ծառայությունս և 2021 թ. հունվարի 25-ին զորացրվել:

Բանակից և հատկապես 44-օրյա պատերազմից

հետո ամբողջովին փոխվեց իմ մոտեցումը կյանքի նկատմամբ: Սկսեցի մեծ կարևորություն տալ ուսմանը և ուժերս փորձեցի ծրագրավորման ոլորտում՝ մասնակցելով «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ պատերազմի մասնակից և հաշմանդամություն ունեցող մարտիկների համար կազմակերպված SS ոլորտի դասընթացներին: Դա հնարավորություն ընձեռեց աշխատելու և ծանոթանալու ոլորտի առաջատար մասնագետների հետ: Մեկ տարվա ընթացքում ես ձեռք եմ բերել ընկերներ, մասնագիտություն և մրցունակ դարձել աշխատաշուկայում: Այնուհետև անցել եմ «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կազմակերպած ուսանողության ծրագիրը, որի արդյունքում առաջատար արտերկրյա մասնագետների հետ աշխատել ենք աշխարհում չլուծված խնդիրների վրա:

Շնորհակալ եմ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին մեր առջև նոր հորիզոններ բացելու համար:

Հարգանքներով՝
Սերգեյ Խաչատրյան
27.12.2024

---

## Նամակ երկրորդ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին»

Շնորհակալ ենք Ձեզ և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամին SS ոլորտում կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելու համար:

Ես՝ Իգիթ Իսրաելյանս, ծնվել և մեծացել եմ Արագածոտնի մարզում: Մինչև ժամկետային ծառայության անցնելը սովորել եմ Հայաստանի տնտեսագիտական համալսարանի «Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժնում:

Ուսումս դեռ չավարտած՝ անցել եմ զինվորական ծառայության Ստեփանակերտում: Չորս ամիս էր մնացել ծառայությանս ավարտին, երբ սկսվեց պատերազմը: Մասնակցել եմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողություններին, վիրավորվելուց հետո ինձ տեղափոխել են Երևան:

Կյանքը շարունակվում է, ու ես ապրում եմ՝ նորօրյա հարաբերությունները հաշվի առնելով: «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ պատերազմի մասնակից և հաշմանդամություն ունեցող մարտիկների SS ոլորտի դասընթացներն օգնեցին մեզ կյանքում մեր տեղն ու դերն ունենալ: Հայաստանի առաջատար և արտերկրյա մասնագետների դասավանդման շնորհիվ մենք սովորեցինք արհեստական բանականություն, մեքենայական ուսուցում, խոր ուսուցում, բարձրագույն մաթեմատիկա, մասնագիտական անգլերեն և հաղորդակցման հմտություններ:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում բազմաթիվ երիտասարդներ ստանում են որակյալ կրթություն՝ հետագայում օգտակար և մասնակից դառնալով մեր երկրի հզորացմանը:

Հարգանքներով՝
Իգիթ Իսրաելյան
27.12.2024թ.

## Նամակ երրորդ

Շնորհակալ ենք «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի SS ոլորտում կրթություն ստանալու հարցում մեզ աջակցելու համար:

Ես՝ Նարեկ Պողոսյանս, ծնվել եմ Գյումրիում 2002 թ. մարտի 31-ին, սովորել եմ տեղի Ակադեմիական վարժարանում: Հենց այս տարիներին էլ արդեն հետաքրքրված էի՝ ինչպես հաջողությամբ միավորել ռազմարդյունաբերությունն ու արհեստական բանականությունը:

2020թ.-ին ընդունվել եմ Հայ-ռուսական համալսարանի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ֆակուլտետ: Նույն թվականի օգոստոսի 9-ին զորակոչվել եմ բանակ՝ ծառայել եմ Մարտակերտի զորամասում և 44-օրյա պատերազմի ամբողջ ընթացքում եղել եմ այնտեղ՝ մասնակցելով մարտական գործողությունների:

Զորացրվելուց հետո շարունակում եմ ուսումս Հայ-ռուսական համալսարանում: Ուսմանը զուգահեռ մասնակցել եմ «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ պատերազմի մասնակից և հաշմանդամություն ունեցող մարտիկների համար կազմակերպված SS ոլորտի դասընթացներին: Նպատակ եմ ունեցել ստացած գիտելիքներս ծառայեցնել մեր երկրի հզորացմանը:

«ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի կազմակերպած դասընթացների շնորհիվ հիմա աշխատում եմ ռազմարդյունաբերության ոլորտում:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և «ՀԵՆՔ» համազգային բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում բազմաթիվ երիտասարդներ կդառնան ոլորտի լավագույն մասնագետներ և մասնակից կդառնան մեր երկրի վերակառուցման գործընթացներին:

Հարգանքներով՝
Նարեկ Պողոսյան
27.12.2024

*ՀՀ վաստակավոր նկարիչ Շմավոն Շմավոնյանի «Արարատ» բնանկարը*

# Հիմնադրամի շահառուները

*Մանուկյան Կարինեի ընտանիքը, 8 երեխա: Բռնագաղթված Քաշաթաղի շրջանի Բերձորից, ապրում է ՀՀ Աշոցքի տարածաշրջանում*

*Դարագուլյան Հերմինեի ընտանիքը, 6 երեխա: Բռնագաղթված Քաշաթաղի շրջանի Հիրիկ գյուղից, ապրում է ՀՀ Արարատի մարզ, Արտաշատում*

*Աճեմյան Լուսինեի ընտանիքը, 6 երեխա: Բռնագաղթված Քաշաթաղի շրջանի Ներքին Սուսից, ապրում է ՀՀ Կոտայքի մարզի Զառ գյուղում*

*Մարգարյան Նաիրայի ընտանիքը, 6 երեխա: Բռնագաղթված Քաշաթաղի շրջանի Վակունիս գյուղից, ապրում է ՀՀ Շիրակի մարզում*

*Բաղդասարյան Նելլիի ընտանիքը, 6 երեխա, Բռնագաղթված Արցախի Միրիկ գյուղից, ապրում է ՀՀ Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում*

*Առաքելյան Օֆելյայի ընտանիքը, 4 երեխա: Բռնագաղթված Իշխանաձորից, ապրում է ՀՀ Արմավիրի մարզում*

*Լիաննա Սաֆարյանի ընտանիքը, 6 երեխա: Բռնագաղթված Շուշի քաղաքից, ապրում է ՀՀ Արագածոտնի մարզում*


**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ** Բան, գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝**
Ավագյան Ա.-բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Նյութերի դասակարգումը՝ Հոգաբարձության խորհրդի անդամ՝ **Մերի Մելիքյանի**
Համարի շարվածքը, ձևավորումը՝ Ս. Մուրադյանի, Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**:
Տպաքանակը՝ 99
Թերթը բաժանվում է անվճար:
**Խմբագրության հասցեն՝**
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.: 060710617; 055-522936; 010-552537: